«Դդմի օր». մրցույթ դպրոցականների համար

Դդումն անփոխարինելի սնունդ է ինչպես մարդկանց այնպես էլ կենդանիների համար:

Այն հարուստ է բազմաթիվ վիտամիններով՝ C, B, B2, PP, պարունակում է կալիում, կալցիում, երկաթ, շաքար, սպիտակուցներ և այլն:

Դդումը դեռ հին ժամանակներից հայտնի է որպես օգտակար և համեղ բանջարեղեն: Աշխարհում դդմի տարբեր տեսակներ կան: Դեռևս 5000 տարի առաջ մեքսիկացիներն այն օգտագործել են սննդի մեջ և դրանով կերակրել են կենդանիներին:

<<Դդմի օր>>-ը նախատեսվում է վերածել տոն-միջոցառման, հնարավորություն ընձեռելով մասնակիցներին, հոգ տանել կենդանիների մասին:

Մրցույթ-միջոցառումն ունի նաև ճանաչողական բնույթ. մրցույթի մասնակիցները կծանոթանան կենդանաբանական այգու կենդանիների սննդակարգին, կենսապայմաններին:

Մասնակցության համար անհրաժեշտ է, որպեսզի դպրոցները ներկայացնեն իրենց հայտերը:

Ընդունվում են ինչպես խմբակային, այնպես էլ անհատական հայտեր:
Օգտագործելով խոհարարական հմտությունները, վառ երևակայությունը՝ մասնակիցները պետք է դդմով ինքնատիպ, զվարճալի և հետաքրքիր «կերակրատեսակներ» պատրաստեն կենդանիների համար:

Զարմացրե՛ք բոլորին ձեր մտքի թռիչքով:

<u>Մրցույթի պայմանները</u>

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է դդմից և այլ բանջարեղենից հետաքրքիր ձևավորմամբ կերակրատեսակ պատրաստել կենդանիների համար:

Կենդանիների կերակրման համար մասնակիցները կարող են օգտագործել տարբեր մրգեր և բանջարեղեն (բազուկ, գազար, դդմիկ, կաղամբ, խնձոր, տանձ, բանան), իսկ դդումը պետք է հանդիսանա կերակրատեսակի ձևավորման գլխավոր պարագան:

Երեխաները կարող են նախապես ընտրել իրենց սիրելի կենդանուն և տեղում նրա համար պատրաստել «տոնական» ուտեստը:

Կենդանաբանական այգու աշխատակիցները պատրաստման ողջ ընթացքում մասնակիցներին կօգնեն իրենց խորհուրդներով:

Մասնակիցները պետք է կենդանաբանական այգի ներկայանան կերի պատրաստման համար անհրաժեշտ մթերքով և աշխատանքային գործիքներով:

Երևանի կենդանաբանական այգին մասնակիցներից յուրաքանչյուրին կտրամադրի մեկ դդում:

<u>Արդյունքների ամփոփում</u>

Մրցույթի արդյունքները կամփոփվեն նույն օրը:

Մրցույթի անվանակարգերն են՝

- Լավագույն նորարարական մոտեցում (մրցանակը՝ հեծանիվ),
- Լավագույն մտահաղացում (մրցանակը՝ գիրք կենդանիների մասին),
- Լավագույն «ուտեստ»՝ ըստ կենդանու (մրցանակը՝ «Զու» ամսագիր):

Հայտերի ներկայացման վերջնաժամկետը նոյեմբերի 14-ն է: Լրացված հայտերը կարելի է ներկայացնել Երևանի կենդանաբանական այգի կամ ուղարկել edu@yerevanzoo.am էլեկտրոնային հասցեով:

Մրցույթի պայմաններին ծանոթանալու համար այցելե՛ք www.yerevanzoo.am, մանկական բաժին կամ կանգահարե՛ք (+37410) 555209 հեռախոսահամարով:

Մրցույթի կազմակերպիչներ՝ Երևանի կենդանաբանական այգի, Երևանի քաղաքապետարան, Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամ

ԵՐԵՎԱՆԻ ԿԵՆԴԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԱՅԳԻ

ԵՐԵՎԱՆ

FPWC®